«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Լեզգիները Ադրբեջանի ազգային քաղաքականության համատեքստում հետխորհրդային տարիներին

ԱՌԱՐԿԱ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ Հարությունյան Աննա

ՄԱՐԶ Կոտայք

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Արտավազի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԼԵԶԳԻՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ……....….....….....6

1. Ադրբեջանի ձուլողական քաղաքականությունը.....6

2. Լեզգիների ազգային շարժումները և հեռանկարները.....16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ..... 23

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Յուրաքանչյուր պետության համար կարևոր է ազգային քաղաքականությունը, որը սուր երանգավորում է ստանում, եթե տվյալ պետությունը ունի ազգային փոքրամասնությունների հիմնախնդիր: Վերոհիշյալ հարցը ցայտուն արտահայտված է Ադրբեջանում: Ադրբեջանը իր գոյության ամբողջ ընթացքում բազմաթիվ բնիկ (լեզգիներ, արցախահայեր, քրդեր, թալիշներ, թաթեր), նաև ոչ բնիկ (ռուսներ, գերմանացիներ) փոքրամասնությունների նկատմամբ վարել է և վարում է ընդգծված ձուլողական և խտրական քաղաքականություն: Ադրբեջանի «ազգային փոքրամասնություններ» համարվող շատ ներկայացուցիչներ այս տարածքի բնիկ ժողովուրդներն են և իրական տերերը:

Թեմայի արդիականությունը կարևորվում է թե՛ գիտական, թե՛ քաղաքական տեսանկյուններից: Ուսումնասիրությունների արդյունքում մենք ականատես ենք լինում Ադրբեջանի կողմից 21-րդ դարում շարունակվող ազգային փոքրամասնությունների ձուլման քաղաքականությանը: Ադրբեջանում տեղաբնիկ ժողովուրդների նկատմամբ իրականացված քաղաքականության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի, քանի որ հենց դրա միջոցով կարելի է խորքային պատկերացում կազմել տարածաշրջանում ծավալվող իրադարձությունների վերաբերյալ: Ադրբեջանի կողմից կեղծվում և աղավաղվում է տարածաշրջանի պատմությունը:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Սույն աշխատանքի օբյեկտը լեզգիների հիմնախնդիրն է Ադրբեջանում, իսկ առարկան՝ նրանց նկատմամբ դրսևորված քաղաքականությունը:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Սույն ավարտական աշխատանքի նպատակն է ներկայացնել 20–րդ դարում ծավալված ազգային-ազատագրական շարժումները, որոնցով լեզգի ժողովուրդը փորձել է պահպանել իր ազատ ինքնորոշման իրավունքը և վերականգնել տարածքային ամբողջականությունը:

Ուսումնասիրության գրականության համառոտ տեսություն:

Ավարտական աշխատանքը շարադրելիս հիմք ենք ընդունել թեմային վերաբերող բազմաթիվ մենագրություններ, գիտական վերլուծական հոդվածներ, համացանցային ռեսուրսներ: Օգտվել ենք թե՛ հայ, թե՛ օտարազգի հեղինակների աշխատանքից՝ պատմական դեպքերի մեկնաբանման և առաջ քաշած տեսակետների մեջ առկա հակասություններն ընդգծելու նպատակով: Դրանց մեջ հարկ է առանձնացնել Գագիկ Համբարյանի «Современная политика властей Азербайджана в отношении лезгин»[1] հոդվածը, որտեղ հեղինակը անդրադարձել է լեզգի ժողովրդի 20–րդ դարի ազգային-ազատագրական շարժումներին, «Սադվալ» կազմակերպությանը: Լեռնիկ Մկրտումյանը «Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում»[2] հոդվածում ներկայացնում է իրավական, սոցիալական, տնտեսական, մշակութային իրավիճակը Ադրբեջանում: Միխայիլ Աղաջանյանի «Политико-правовые аспекты положения национальных меньшинств Азербайджанской Республики»[3] հոդվածում ներկայացվում է նախկին խորհրդային հանրապետություններում ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության արդիական հիմնահարցերը և իր աշխատանքում փորձում է տալ ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրների քաղաքական, իրավական լուծումները: Լեզգիների ազգային շարժումների ուսումնասիրման համար հիմք է ծառայել նաև Տ. Ն. Լիտվինովայի «Особенности институциализации этнонационального движения ха Северном Кавказе России (на примере лезгин)»[4] հոդվածը, որտեղ հեղինակը նշում է, որ լեզգիների ազգային շարժումները հատկապես ակտիվացել են 1990-ական թթ., որոնց նպատակն էր հասնել ոչ միայն լեզգիների ազատ ինքնորոշման իրավունքին, այլև լեզգիական միասնական պետության ստեղծմանը: Հոդվածում անդրադարձ է

[1] Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI, Երևան,2016

[2] Տե՛ս Լ. Մկրտումյան, Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում, Երևան, 2012, https://arar.sci.am/dlibra/publication/294483/edition/270319/content

[3] Տե՛ս Агаджанян М., Политико-правовые аспекты положения национальных меньшинств Азербайджанской Республики, 2006, file:///C:/Users/Home/Downloads/politiko-pravovye-aspekty-polozheniya-natsionalnyh-menshinstv-azerbaydzhanskoy-respubliki.pdf

[4] Տե՛ս Лутвинова Т. Н., Особенности институциализации этнонационального движения ха Северном Кавказе России (на примере лезгин), 2015 file:///C:/Users/Home/Downloads/osobennosti-institutsionalizatsii-etnonatsionalnogo-dvizheniya-na-severnom-kavkaze-rossii-na-primere-lezgin.pdf

կատարվել նաև լեզգիական ազգային կազմակերպությունների գործունեությանը Ռուսաստանում, Դաղստանում և Ադրբեջանում: Ադրբեջանի կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացված բռնի ձուլման քաղաքականությունը հատկապես լավ է նկարագրված «Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության»[5] գրքում, որտեղ նշված է, որ տեղաբնիկները որևէ տարածքային, մշակութային և այլ պահանջներ չեն կարող ներկայացնել Ադրբեջանին: Սույն աշխատանքում օգտագործված գրականությունը բացահայտում է այն ներդրումը, որը կարող է ունենալ տվյալ ժողովուրդը համաշխարհային մշակույթի ձևավորման գործընթացում:

Աշխատանքի կառուցվածքը: Ավարտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Առաջին գլխում, որը վերնագրված է «Լեզգիները Ադրբեջանի ազգային քաղաքականության համատեքստում հետխորհրդային տարիներին», ներկայացվում են հետխորհրդային շրջանում Ադրբեջանի վարած ձուլողական քաղաքականությանը, վիճակագրական տվյալները, իսկ երկրորդ գլխում՝ ազգային-ազատագրական շարժման ձևավորման առաքելությունը որպես ազգային ինքնության պահպանման հիմք:

[5] Տե՛ս Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության, Հրատարակություն ՀՅ Դաշնակցություն, Երևան, 2007

ԼԵԶԳԻՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. Ադրբեջանի ձուլողական քաղաքականությունը

Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը համարվում է նախկին Խորհրդային Միության տարածքում ամենաակտուալ քաղաքական և իրավական հիմնախնդիրը: Նախկին խորհրդային հանրապետություններից եզակիներն էին, որ բազմազգ պետություններ չէին: Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ մտնում էին բազմաթիվ տեղաբնիկ հանրույթներ, որոնք հասարակական, քաղաքական, մշակութային իրավունքներ, առավել ևս բնականոն զարգացում չեն ունեցել: Նրանց իրավունքներն ու ազատ զարգացման հնարավորությունները ոտնահարվել են Ադրբեջանի կողմից:

Ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը համարվում է բազմազգ պետություն, որի տարածքում Խորհրդային Միության փլուզումից հետո ապրում են մի քանի տարբեր էթնոմշակութային հանրույթներ: Վերջիններս դիտարկվում են որպես Ադրբեջանի ազգային փոքրամասնություններ, որոնք տարբերվում են իրենց ազգային, էթնոմշակութային, կրոնական և այլ որակներով տիտղոսակիր ազգից՝ ադրբեջանցիներից:

Ադրբեջանական և նրանց մոտ աղբյուրները մատնանշում են, որ Ադրբեջանում ապրում է ընդհանուր 8,5 միլիոն մարդ, որոնցից 90%-ը էթնիկ ադրբեջանցիներ են: Պետք է նշել, որ չնայած սրան, այստեղ ապրում է 20 ազգային փոքրամասնություն: Ամենախոշորները համարվում են լեզգիները, թալիշները, ռուսները, թուրք-մեսխեթցիները և քրդերը: Ադրբեջանի տեղաբնիկ ժողովուրդներ են համարվում լեզգիները, թալիշները և քրդերը: Նրանք ապրում են իրենց պատմական տարածքում և որոշ շրջաններում բնակչության մեծամասնությունն են կազմում:

Այսպիսով, պետք է դնել տարբերություն «ազգային փոքրամասնություն» և «տեղաբնիկ ժողովուրդ» հասկացությունների միջև: Լեզգիները ապրում են հանրապետության հյուսիս-արևելքում, որը սահմանակից է Ռուսական Կովկասի հետ: Ըստ դեմոգրաֆիական տվյալների՝ Ադրբեջանում ապրում է մոտ 260 հազար լեզգի (համաձայն 1999թ. պաշտոնական տվյալների՝ 178 հազար լեզգի): Լեզգիական

ազգային շարժման ղեկավարները ապացուցում են, որ Ադրբեջանում լեզգիների թիվը 800 հազար է:

Մասնագետները նշում են, որ ազգային փոքրամասնությունների առջև ծառացած բազմաթիվ հիմնախնդիրները ամբողջ աշխարհում նույնն են: Ադրբեջանում ազգային փոքրամասնությունների և բնիկ ժողովուրդների իրավունքները դիվերսիֆիկացվում են:

Ազգերի բաժանման խնդիրը սուր բնույթ ստացավ նախկին խորհրդային տարածաշրջաններում: Կ. Ս. Հաջիևը նշում է, որ ԽՍՀՄ փլուզումից և նորանկախ պետությունների ձևավորումից հետո ազգային փոքրամասնությունները հայտնվեցին բոլորովին նոր կարգավիճակում: Առաջացան անդրսահմանային համայնքներ Վրաստանում (հայեր, ադրբեջանցիներ, օսեր) և Ադրբեջանում (լեզգիներ, ավարներ, ցախուրներ):[6]

Գորբաչովի հրապարակայնության և դեմոկրատիայի քաղաքականությունը Խորհրդային Միությունում բերեց մի շարք ազգերի ազգային ինքնագիտակցության ծաղկմանը, որի արդյունքում այս կայսերապետության վերջին տարիներին ծագեցին ազգային կոնֆլիկտներ: Այդ կոնֆլիկտներից շատերը առաջացան Այսրկովկասում՝ հայ-ադրբեջանական, վրաց-աբխազական, վրաց-հարավօսական: Բացի դրանից Վրաստանում և Ադրբեջանում կան կոնֆլիկտածին շրջաններ, որոնք ավելի մեծ վտանգ են ներկայացնում այս երկրների համար, քան գոյություն ունեցողները:[7]

Մուսավաթա-երիտթուրքական դավադրության հետևանքով 1918թ. Այսրկովկասում ստեղծված ազերի թուրքերի Ադրբեջան պետությունը իր գոյության ամբողջ ընթացքում պանթյուրքիզմի քաղաքականությամբ փորձել է ոչնչացնել ու ձուլել իր պետության կազմում հայտնված տեղաբնիկ ժողովուրդներին: Երկար տարիներ լեզգիների նկատմամբ իրականացրել է ձուլողական քաղաքականություն:

---

[6] Տե՛ս Агаджанян М., Политико-правовые аспекты положения национальных меньшинств Азербайджанской Республики, 2006, էջ 124-128, file:///C:/Users/Home/Downloads/politiko-pravovye-aspekty-polozheniya-natsionalnyh-menshinstv-azerbaydzhanskoy-respubliki.pdf

[7] Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016, էջ 196-197

Եվրոպայի խորհրդի՝ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի տվյալներով ներկայումս Ադրբեջանում գոյություն չունի ոչ մի պետական մարմին, որտեղ ազգային փոքրամասնությունները հնարավորություն կունենան կարծիք արտահայտելու իրենց հուզող պետական քաղաքականության մասին: Մի շարք զանգվածային լրատվական միջոցներ ու քաղաքական գործիչներ, ովքեր նախկինում փորձում էին պաշտպանել ազգային փոքրամասնությունների շահերը, մեղադրվում էին «թշնամու օգտին գործելու» կամ «անջատողականության» մեջ:

20րդ դարի ընթացքում լեզգիները բարձրացրին լեզգիական ազգի համար կարևոր նշանակություն ունեցող հարց՝ վերամիավորել Ադրբեջանի և Դաղստանի լեզգիական հողերը: Լեզգիական ժողովրդի վերամիավորմանը խոչընդոտեց Նարիմանովը, որն այդ ժամանակ Անդրկովկասյան ֆեդերացիայի նախագահն էր: Խորհրդային շրջանում լեզգիական ժողովրդի ներկայացուցիչները անընդհատ դիմումներ էին ուղարկում Մոսկվայի և Ադրբեջանի Կենտկոմին լեզգիական հարցի լուծման համար:[8]

Մոսկովյան արխիվներում պահպանվել է Ադրբեջանի Խաչմազի շրջանի լեզգի բնակիչների 1936թ. սեպտեմբերի 14-ի դիմումը՝ ուղղված ԽՍՀՄ Կենտգործկոմին կից սահմանադրական հանձնաժողովին: Դիմումում ասվում է, որ ի տարբերություն դաղստանաբնակ լեզգիների, Ադրբեջանում բնակվող նրանց հայրենակիցները զուրկ են մշակույթը զարգացնելու հնարավորությունից, չունեն գիր ու գրականություն: Այս դիմումով նաև արծարծվում էր Դաղստանի և Ադրբեջանի լեզգիների անունից մեկ ընդհանուր վարչական միավորի մեջ միավորվելու հարցը:[9]

Լեզգիների բազմաթիվ դիմումների արդյունքը եղավ այն, որ կենտրոնական իշխանության մարմինները տպագրեցին «Известиях ЦК КПСС», (№ 10, 1989). «Լեզգիներին տալ ինքնավարություն Ադրբեջանական ԽՍՀ-ի մի շարք հյուսիսային շրջաններում, կամ այդ տարածքները մտցնել Դաղստանի կազմի մեջ: Կա նաև առաջարկ կազմավորել Լեզգիական ինքնավար խորհրդային սոցիալիստական հանրապետություն առանձին Դաղստանի և Ադրբեջանի շրջաններում»: 1963թ.

[8] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝23.03.2022)

[9] Տե՛ս Լ. Մկրտումյան, Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում, էջ 100, https://arar.sci.am/dlibra/publication/294483/edition/270319/content

Ադրբեջանի Կենտրոնական կոմիտեն ստիպված էր հրապարակել «Ադրբեջանում լեզգիների սոցիալ-տնտեսական և մշակութային պահանջների բավարարման մասին որոշումը»։ Այս կետերից ոչ մեկը չիրականացավ։ Նույնիսկ սկսվեցին բացահայտ հետապնդումներ, որի արդյունքում մի քանիսին սպանեցին, որոշներին էլ հեռացրին աշխատանքից։[10]

1965թ. լեզգի գրող Իսկանդեր Կազիևը հիմնեց մի կազմակերպություն, որը պահանջում էր լեզգիների բնակեցման տարածքը միավորող առանձին վարչական միավորի ստեղծում։ 1965թ. մայիսի 14-ին Դաղստանի մարզկոմը «գրող Իսկանդեր Կազիևի ազգայնական և հակակուսակցական գործունեության մասին» որոշում կայացրեց, որից հետո գրողը արտաքսվեց, 20 ընկերները ձերբակալվեցին, մի քանիսն էլ հայտնվեց հոգեբուժարանում։ [11]

Խորհրդային Միության փլուզումից հետո Դաղստան է վերադարձել մոտ 250 հազար լեզգի։ Նրանք չեն ստացել փախստականի կարգավիճակ։ Տասնյակ հազարավոր լեզգիներ (հատկապես երիտասարդները), որոնք փախել են Ադրբեջանից, քաղաքական հետապնդումների պատճառով թաքնվել են Հարավային Դաղստանում և Ռուսաստանում։ Ռուսաստանի և Ադրբեջանի միջև պայմանավորվածության համաձայն, էքստրեմիզմի և բռնությունների դեմ պայքարի պատրվակով, նրանցից շատերին փոխանցեցին Ադրբեջանին որպես հանցագործների։ Տասնյակ հազարավոր փախստականներ չունեն ռուսական անձնագիր և քաղաքացիություն։ Լեզգիների երեխաները, որոնք ծնվել են նախկին խորհրդային հանրապետություններում, նույնպես չունեն անձնագիր և քաղաքացիություն։[12]

Թե՛ խորհրդային, թե՛ ներկայիս անկախ Ադրբեջանում լեզգիների ազգային ինքնագիտակցությունը մթագնելու և ուծացնելու գործընթացը ունեցել է նաև կրոնամշակութային երանգավորում։ Բաքվի կենտրոնում՝ Կույսի աշտարակի

---

[10] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝23.03.2022)

[11] Տե՛ս Լ. Մկրտումյան, Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում, էջ 100, https://arar.sci.am/dlibra/publication/294483/edition/270319/content

[12] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝23.03.2022)

հարևանությամբ, 20-րդ դարի 30-ական թթ. դադարեցվում են կրոնական ծառայությունները, իսկ 1987թ. «Լեզգի մզկիթ 1169թ.» մակագրությունը փոխարինվում է «12-րդ դարի մզկիթ» մակագրությամբ։

1989թ. լեզգի հայտնի բանաստեղծ և հասարակական գործիչ Ի. Շարիֆովի՝ մզկիթի պատմական անունը վերականգնելու համար մոսկովյան «Նաուկա ի ռելիգիա» հանդեսին և Պատմության ու մշակույթի պահպանման միությանը դիմած բողոքը հաղթանակեց, և մզկիթը վերստացավ իր նախկին անվանումը։ Ադրբեջանի ներկայիս իշխանությունները 2009թ. դեկտեմբերին մզկիթը յուրացնելու նպատակով մի ֆարս բեմականացրին։ Կրոնական կառույցների վերականգման մասին որոշման ընդունումից հետո «Լեզգի մզկիթի» կրոնական համայնքի անդամների վերագրանցման դիմումը Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական կոմիտեն վերահասցեագրեց Կովկասի մուսուլմանների վարչությանը, ինչը սխալ քայլ էր, քանի որ այս կազմակերպությունը շիա մուսուլմանների հոգևոր կառույց էր։ Այստեղ հրաժարվեցին պահանջվող փորձագիտական եզրակացությունը տալ այնքան ժամանակ, մինչև մզկիթը Աշուրաբեկ չվերանվանվի։ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Ալլահշուքյուր Փաշազադեն Ադրբեջանի լեզգիների բազում դիմումներին պատասխանեց իր տեղակալ Մուսաևի միջոցով։ Նա հայտարարեց, որ «…լեզգիների կամ թալիշական մզկիթ չի կարող լինել։ Ազգային հատկանիշով մզկիթ անվանելը բացարձակապես սխալ է։ Մզկիթը պաշտոնական անուն ունի։ Մինչև չփոխեն անվանումը, գրանցում չեն ստանա»։ Մուսաևը հայտարարեց, որ անվան փոփոխությունը պետության առանձնաշնորհն է՝ դրանով խոստովանելով, որ այս ամենի հետևում Ադրբեջանի իշխանություններն են կանգնած։ Համաձայն որոշ աղբյուրների՝ Ադրբեջանում արգելված է սուննի ազանի՝ բարձրախոսով աղոթքի հրավիրման կոչը։ Խոչընդոտվում են Դաղստանի մուսուլմանների վարչության ներկայացուցիչների շփումները Ադրբեջանի իրենց դավանակիցների հետ։

1936թ. Քուսար քաղաքում Բաքվի էմիսարների կողմից հրավիրված կոնֆերանսում ընդունվեց որոշում, որով լեզգիաբնակ շրջաններում դպրոցական ուսուցումը պետք է իրականացվեր ոչ թե լեզգիերենով, այլ ադրբեջաներենով և ռուսերենով։ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը չսահմանափակվեց մայրենի լեզվով միջնակարգ

կրթություն ստանալու սահմանադրական իրավունքից լեզգիներին զրկելով: Ադրբեջաներենով և ռուսերենով միջնակարգ և բարձրագույն կրթությունը վճարովի դարձավ: Ստիպում էին վճարել «լեզգի փուլու» կոչվող առանձնահատուկ հարկ՝ միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում՝ տարեկան 250 ռուբլի, բուհական կրթության համար՝ 400 ռուբլի: Կարելի էր խուսափել հարկը վճարելուց, սակայն դրա համար անհրաժեշտ էր անձնագրում փոխել ազգությունը՝ դառնալով ադրբեջանցի: Բազմաթիվ լեզգիներ, ովքեր հարկը վճարելու հնարավորություն չունեին, բայց ցանկություն ունեին միջնակարգ կամ բարձրագույն կրթություն ստանալու, փոխում էին իրենց ազգությունը: Քաղաքակրթության պատմության ընթացքում ազգի նկատմամբ այդպիսի՝ նախադեպը չունեցող բռնությունը գործադրվում էր մինչև 1966 թ.:

Ադրբեջանի անկախացումից հետո կացությունը, այս առումով, չփոխվեց: 2008 թ. փետրվարին Ադրբեջանի գերազանցապես լեզգիաբնակ Քուսարի շրջանի վարչակազմի նորանշանակ ղեկավարը՝ Շահիրա Ալխասովան, ի լուր ամենքի հայտարարեց շրջանի տարածքում լեզգիերեն ցուցանակների, պետական հաստատություններում, դպրոցներում լեզգիերենի արգելման մասին: Այդ հակասահմանադրական հրահանգի հետևանքներից մեկը Քուսարի՝ իր առևտրի կետերից մեկում լեզգիերեն ցուցանակը չփոխած լեզգի ձեռներեցի ձերբակալությունն էր:[13]

Ադրբեջանական մամուլը (Թաջուդին Սայիդով, 2008թ., փետրվար 11) տալիս է տեղեկություն Նաթիկա Ալիևայի ձերբակալության մասին, որ «ստուգումների ժամանակ նրան պատկանող օբյեկտներում խախտումներ են հայտնաբերվել: Այդ խախտումները կապված են օտար տարադրամով առևտրի և այլ օրենքների խախտման հետ»: Այս փաստը ցույց է տալիս, որ ադրբեջանական հատուկ ծառայությունները, ուժային կառույցները պայքար են տանում քաղաքականորեն ակտիվ, հայրենասեր լեզգիական ժողովրդի դեմ:[14]

---

[13] Տե՛ս Լ. Մկրտումյան, Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում, էջ 101-102, https://arar.sci.am/dlibra/publication/294483/edition/270319/content

[14] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝23.03.2022)

Պատմությունը կեղծելու, ոճրագործության մեղքը ուրիշի վրա բարդելու և դրանով այլ ազգերի միմյանց դեմ հրահրելու ադրբեջանական քաղաքականության դեռևս իր նմանը չունեցող «գլուխգործոց» է Ղուբայում հայտնաբերված զանգվածային թաղումնավայրի շուրջ ծավալված շոուն: 2007 թ. ապրիլի 11-ին Ադրբեջանի Ղուբա քաղաքում մարզադաշտի կառուցման ժամանակ երկու հորերում բազմաքանակ դիակներ հայտնաբերվեցին: Ուղիղ երկու օր անց Ադրբեջանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի հնէաբանության և ազգագրության ինստիտուտի տնօրենը հայտարարեց. «Մարդաբանական հետազոտությունները ցույց տվեցին, որ այդ մարդիկ մահմեդականներ են»: Ապրիլի 18-ին Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Մահմուդ Քերիմովն իր հայտարարության մեջ նշեց, որ աճյունների նախնական փորձաքննությունը կանցկացնեն ադրբեջանցի մասնագետները: Միևնույն ժամանակ նշվեց, որ «աճյունները կարող են կա՛մ զանգվածային ոչնչացման հետևանքով զոհված, կա՛մ համաճարակից մահացած մարդկանցը լինել»: Հայտնաբերված աճյունների մարդաբանական և գենետիկ համատեղ հետազոտություն իրականացնելու՝ շահագրգիռ այլ կողմերի դիմումը Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահին և նույն ակադեմիայի հնէաբանության և ազգագրության ինստիտուտի տնօրենին, անպատասխան մնաց: 2008 թ. մայիսի սկզբին Ադրբեջանի Մարդու իրավունքների պաշտպան Է. Սուլեյմանովան դիմեց նախագահ Ի. Ալիևին՝ խնդրելով Ղուբայում բացել հայտնաբերված զանգվածային սպանության զոհերի թանգարան և հուշակոթող: Ապա Ի. Ալիևին նմանատիպ խնդրանքով դիմեցին Ադրբեջանի հրեական համայնքի մի քանի ներկայացուցիչներ, այդ թվում՝ Ադրբեջանի Միլլի մեջլիսի պատգամավոր Եվդա Աբրամովը և Ադրբեջանի լեռնական հրեաների կրոնական առաջնորդ Սիմոն Իխիլովը: Նույն՝ 2008 թ. Իսրայելում հրատարակվեց Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի Մարդու իրավունքների ինստիտուտի տնօրեն Ռ. Մուստաֆաևի «Մահվան քայլարշավ» գիրքը, ուր հեղինակը Ղուբայի թաղումնավայրը որակում է որպես «հրեա ժողովրդի դեմ հայերի իրականացրած ոճրագործության ապացույց»: 2009 թ. դեկտեմբերի 30-ին հրապարակվեց Ղուբայի ցեղասպանության հուշահամալիր կառուցելու մասին Ադրբեջանի նախագահի հրամանագիրը: Այսօր այդ թեման ամբողջովին

քաղաքականացված է և այդպես էլ գիտական գնահատականի չի արժանացել: Հուշահամալիրը դարձել է քաղաքական առևտրի մանրադրամ և «անհրաժեշտ» մարդկանց համար զբոսաշրջության վայր: 2011թ. մարտին Ղուբայի հուշահամալիրում իսրայելցի լրագրողների և հասարակական գործիչների համար հատուկ շրջագայություն կազմակերպվեց, որի ժամանակ դա ներկայացվեց որպես հրեաների ցեղասպանության զոհերին նվիրված հուշահամալիր: Փորձաքննության արդյունքները, եթե դա իրականում անց է կացվել, մինչ այժմ չեն հրապարակվել: Դրա փոխարեն Ադրբեջանում այն դարձել է քաղաքական շահարկման թեմա: Հայտնաբերված աճյունները առանց որևիցե հիմնավորման, պայմանավորված քաղաքական իրադրությամբ, ճանաչվում են մերթ ադրբեջանցիներինը, մերթ հրեաներինը, մերթ էլ լեզգիներինը: Դրա հետ մեկտեղ հրատարակվում են նյութեր, որոնք պնդում են, թե Ղուբայի թաղումնավայրում ամփոփված են հայերի կողմից սպանված ադրբեջանցիներ և լեզգիներ, իսկ հանրապետության սահմաններից դուրս ադրբեջանական քարոզչամեքենան գերադասում է խոսել հրեաների ցեղասպանության մասին: Ամենայն հավանականությամբ, այս գաղափարի հեղինակների հաշվարկով, ադրբեջանցիների կոտորածը պակաս նշավակելի հանցագործություն կհամարվի, քան հրեաներինը : Չի բացառվում, որ Ղուբայի այս թաղումնավայրը 1918թ. ներկայիս Ադրբեջանի տարածք ներխուժած թուրքական բանակի գազանությունների հետևանքն է: Բաքուն գրավելուց հետո թուրքերը շարժվեցին դեպի Դերբենդ: Թուրքական այս արշավանքի ընթացքում ոչ թուրքական բնակչության նկատմամբ ցեղասպանություն իրականացվեց: Ադրբեջանի իշխանությունները լեզգիների դեմ իրենց քաղաքականության մեջ օգտագործում են նաև ազգային արժանապատվությունը ծանակելու գռեհիկ ու կոպիտ մեթոդներ: Հիմնականում լեզգիաբնակ Ղուբայի շրջանի վարչակազմի ղեկավար Ռաուֆ Հաբիբովը ակտիվի նիստում նույն շրջանի բնակիչներին անվանեց դավաճաններ և ծախու արարածներ: 2012 թ. մարտի 1-ին փողոց դուրս եկած մարդկանց վրդովմունքը այնքան շիկացավ, որ Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին Ղուբայում կենտրոնացնել ներքին զորքերի ստորաբաժանումներ, այդ թվում՝ զրահատեխնիկա:[15]

[15] Տե՛ս Լ. Մկրտումյան, Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում, էջ 102-104,

Պետք է նշել, որ Ադրբեջանի կողմից իրականացվում է նաև տնտեսական էքսպանսիա լեզգիների նկատմամբ։ Քուսարի շրջանը, որը հեռու չէ լեզգիական Լացար գյուղից համարվում է լեռնադահուկային տուրիզմի զարգացման կենտրոն և քաղցր պատառ է ադրբեջանական գործարարների համար, որոնք փորձում են տեր դառնալ այստեղի տուրիստական, արդյունաբերական և գյուղատնտեսական բիզնեսներին։ Լեզգի գործարարները այստեղ իրենց անապահով են զգում։ Ադրբեջանական տարրի գերիշխող դիրքը լեզգիական պատմական տարածքներում ադրբեջանական իշխանության ցանկությունն է։ Քուսարի տարածքում գտնվող պահածոների գործարանը, հազարավոր հեկտար հողեր լեռնային հատվածներում, ինչպես նաև ցածրադիր շրջանների բարեբեր հողերը գտնվում են ադրբեջանցիների ձեռքում։[16]

1992թ. փետրվարի վերջին ադրբեջանական ղեկավարությունը ընդունեց որոշում կառուցել Սամուր-Ապշերոն ջրատարը, որը Սամուրի ջուրը պետք է հասցներ Բաքու և Սումգայիթ։ Անխնա օգտագործման արդյունքում Սամուր գետը ծանծաղեց, որի արդյունքում Մուշքուրի հովտում շուրջ 100 հազար լեզգիներ զրկվեցին ջրի հիմնական աղբյուրից։ [17]

1992 թվականից ամիսը մեկ անգամ լույս է տեսնում մեկ այլ լեզգիական թերթ՝ «Սամուրը», որը եղել է Բաքվի համանուն լեզգիական խմբակի պաշտոնաթերթը։ Իշխանությունները դա դարձրին «միջազգային»։ Այն նույնպես տպագրվում է երեք լեզվով։

Ադրբեջանի Հանրապետության որոշ դպրոցներում 1-9-րդ դասարաններում լեզգի լեզվի ուսուցումը՝ շաբաթական 2 ժամ, ձևական բնույթ է կրում։ Չկան մայրենի լեզվի դասագրքեր և ուսումնական գրականություն, դրանք չեն տպագրվում Բաքվում, չեն պատվիրվում Մախաչկալայից (ինչպես եղել է խորհրդային իշխանության տարիներին)։ Ուսումնական ծրագրերը չեն ներառում «Լեզգիական գրականություն» առարկան, նշված չէ լեզգի ժողովրդի պատմության, մշակույթի և ավանդույթների

---

https://arar.sci.am/dlibra/publication/294483/edition/270319/content

[16] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝24.03.2022)

[17] Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016, էջ 198-199

ուսումնասիրությունը, իսկ լեզգի լեզվի ծրագիրը կազմվել է ադրբեջաներենով: Այսպիսով, ԱՀ-ում լեզգի երեխաները արհեստականորեն զրկված են մայրենի լեզվից և իրենց պատմությունն ու մշակույթը ուսումնասիրելու իրավունքից:

Միանգամայն ակնհայտ է, որ Ադրբեջանի անկախությունը և նրա «ժողովրդավարացումը» ողբերգական հետևանքներ ունի այս երկրի բնիկ ժողովուրդների համար, ովքեր չեն կարող հույս ունենալ, որ Ադրբեջանը կարող է ազգային հանդուրժողականության քաղաքականություն վարել: Ընդհակառակը, նա միտումնավոր վարում է բնիկ ժողովուրդների ոչնչացման քաղաքականություն: Ցավոք սրտի, ԵԽ-ն ընդունել է Ադրբեջանի ղեկավարության այնպիսի քաղաքականացված կողմնակալ զեկույց, որն իրականության հետ կապ չունի:

Այսպիսով, ի՞նչ ունենք այսօր: Լեզգի ժողովուրդը և՛ Ադրբեջանում, և՛ Դաղստանում ամբողջությամբ հեռացված է իշխանությունից՝ ի դեմս առաջին դեմքերի: Տեղի է ունենում լեզգիների համակարգված դուրս մղում ուժային բոլոր կառույցներից: Դաղստանի և Ադրբեջանի ղեկավարներն ամբողջությամբ դուրս են եկել լեզգի ժողովրդի խնդիրների լուծումից: Ռուսաստանի և Ադրբեջանի միջև լեզգի ժողովրդի կարգավիճակի վերաբերյալ ավելի վաղ ծրագրված բանակցային գործընթացը խաթարվել է: Ակնհայտ փորձեր են արվում լեզգի ժողովրդի շահերը շրջանցելու, Դաղստանի և Ադրբեջանի միջպետական հարաբերությունների հարցերը ի վնաս լեզգի ժողովրդի լուծելու համար: Սոցիալական ոլորտը, գիտությունը, կրթությունը, մշակույթը գտնվում են անմխիթար վիճակում: Երիտասարդները գտնվում են վտանգավոր կրիտիկական վիճակում. աշխատանք չկա, նրանք չեն կարողանում կրթություն ստանալ: Նպատակաուղղված բռնաճնշումները և սպանությունները խաղաղ ժամանակների համար անհավանական չափերի են հասել:

Ըստ էության, այս հանրապետությունների կառավարությունները ցեղասպանական քաղաքականություն են վարում լեզգի ժողովրդի նկատմամբ՝ օգտագործելով իրենց տրամադրության տակ եղած բոլոր հնարավորությունները»:[18]

[18] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝24.03.2022)

2. Լեզգիների ազգային շարժումները և հեռանկարները

Որոշ էթնիկ խմբեր ոչ միայն չունեն պետականության որևէ ձև, այլև բաժանված են մի քանի պետությունների միջև: Դա է պատճառը, որ նրանց կողմից քաղաքական կարգավիճակի (ստատուսի) և իրենց ինքնորոշման իրավունքների իրականացումը խառը կամ անհանգիստ էթնոքաղաքական իրավիճակ են ստեղծում միանգամից մի քանի երկրներում: Ազգերի բաժանման խնդիրը սուր բնույթ ստացավ նաև նախկին խորհրդային տարածաշրջաններում, հատկապես Կովկասում:

Կովկասի պառակտված ժողովուրդներից են Հարավային Դաղստանում և Ադրբեջանում բնակվող լեզգիները: Կովկասը Ռուսական կայսրությանը միացնելուց հետո լեզգիներով բնակեցված տարածքները 1860թ. բաժանվեցին Դաղստանի շրջանի և Շամախիի նահանգի միջև (այն գտնվում է ժամանակակից Ադրբեջանի տարածքում): Լեզգիներն առաջին ընդգծված բողոքն իրենց բաժանման դեմ արտահայտեցին 1921թ. դեկտեմբերի 5-ին: 1958-1960 թթ. լեզգի ժողովրդի խնդիրները բարձրացրել է ազգային մտավորականությունը: [19]

Տարածքային կառավարման մասին լեզգիների առաջին պահանջը սկսվում է 1965թ., երբ դաղստանցի լրագրող Իսկանդեր Կազիևի գլխավորած ազգայնական կազմակերպությունը բողոքեց Ադրբեջանի կողմից հաստատված ձուլման քաղաքականության դեմ՝ կոչ անելով միասնական հողի, մշակութային ինքնավարության և ազատության լեզգիների համար:[20]

1990-ականների սկզբին էթնիկ մոբիլիզացիայի գործընթացի ֆոնին, որն ընդգրկում էր բոլոր ռուս ժողովուրդներին, միանգամից ստեղծվեցին մի քանի լեզգիական հասարակական-քաղաքական կազմակերպություններ՝ Լեզգիական ազգային շարժում՝ «Սադվալ» («Միասնություն»), Լեզգիական Ազգային խորհուրդ, իսկ Ադրբեջանի տարածքում՝ Լեզգիական դեմոկրատական կուսակցություն, Լեզգիական

[19] Տե՛ս Литвинова Т. Н., Особенности институциализации этнонационального движения ха Северном Кавказе России (на примере лезгин), 2015, էջ 111-112, file:///C:/Users/Home/Downloads/osobennosti-institutsionalizatsii-etnonatsionalnogo-dvizheniya-na-severnom-kavkaze-rossii-na-primere-lezgin.pdf

[20] Տե՛ս F. Khansari, M. Ali Basiri, E. Yazdani, Ethnic Bargaining and separatism in the South Caucasus, 2019, էջ 188

ազգային կենտրոն՝ «Սամուր»: Դրանցից առաջատար կազմակերպությունն էր 1990 թվականի հունիսի 14-ին ստեղծված «Սադվալը»:[21]

«Սադվալ» կազմակերպությունը կոչ էր անում Ռուսաստանի և Ադրբեջանի տարածքում գտնվող լեզգիներին վերամիավորվել և ձևավորել լեզգիների հանրապետություն Ռուսաստանի տիրապետության ներքո: «Սադվալը» նաև ձգտել է վերագծել Ադրբեջանի և Ռուսաստանի միջև սահմանը՝ լեզգիների համար անկախ պետություն ստեղծելու նպատակով: Միևնույն ժամանակ Ադրբեջանում ստեղծվեց «Սամուր» կազմակերպությունը, որը քարոզում էր ավելի մեծ մշակութային ինքնավարություն լեզգիների համար Ադրբեջանում:

1992թ. սկսվեցին բողոքի ցույցեր, երբ Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում ադրբեջանցի փախստականները վերաբնակեցվեցին լեզգիների հողերում: 1990-ական թթ. ընթացքում լեզգիների և ադրբեջանական կառավարության միջև լարվածությունը, որը սրվել էր փախստականների ճգնաժամի հետևանքով, շարունակեց խթանել լեզգիների մոբիլիզացիային:[22]

«Սադվալի» հովանավորության ներքո լեզգիները պայքար սկսեցին իրենց ինքնորոշման համար: 1992թ. ապրիլի 6-ին Մոսկվայում լեզգիների ցույց է կազմակերպվում և Ռուսաստանի Դաշնության ղեկավարությունից պահանջում են պաշտպանել իրենց իրավունքները Ադրբեջանում: 1993թ. հուլիսի 3-ին «Սադվալը» պաշտոնապես գործելու իրավունք ստացավ, քանի որ Դաղստանի Արդարադատության նախարարությունը այն գրանցեց որպես քաղաքական կազմակերպություն: «Սադվալը» փորձել է Ռուսաստանի Դաշնությանը ներքաշել Ադրբեջանի ներքին գործերի մեջ, որը Բաքվում կտրուկ արձագանք ունեցավ: 1996թ. մայիսին Սադվալի 11 անդամներ փակ դատավարության ընթացքում մեղադրվեցին 1994թ. Բաքվի մետրոյի պայթյունի կազմակերպման մեջ:[23]

1998թ. («Авразия» թերթ, 15.04.98), Ազեր Սալմանօղլի Ասլանովը դատապրոցեսի ժամանակ ամբողջությամբ ընդունում է այն փաստը, որ իր մոր կյանքի փրկության

---

[21] Տե՛ս Литвинова Т. Н., Особенности институциализации этнонационального движения на Северном Кавказе России (на примере лезгин), 2015, էջ 114, file:///C:/Users/Home/Downloads/osobennosti-institutsionalizatsii-etnonatsionalnogo-dvizheniya-na-severnom-kavkaze-rossii-na-primere-lezgin.pdf

[22] Տե՛ս F. Khansari, M. Ali Basiri, E. Yazdani, Ethnic Bargaining and separatism in the South Caucasus, էջ 189-191

[23] Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016, էջ 199

համար իրականացրել է Բաքվի մետրոյի պայթյունը: Լինելով Ղարաբաղում գումարտակի հրամանատար՝ ստանում է կոնտուզիա և հայտնվում հայկական գերության մեջ: Իբր հայերը որդուն տեսակցելու համար կանչում են մորը և բռնում, իսկ որդուն էլ ստիպում են իրականացնել պայթյուն մոր ազատության համար: Այսպես խեղաթյուրելով փաստերը՝ Ադրբեջանի ազգայնականները տարածում են կեղծ փաստեր լեզգիական ժողովրդի և Սադվալի մասին: Չնայած Ազեր Սալմանօղլու այս վկայությանը՝ ադրբեջանական բանտերում ահավոր պայմաններում անհիմն բանտարկված են շուրջ 40 լեզգիներ, որոնցից 7-ը սպանվել են:[24]

«Սադվալի» ամենամեծ գործունեության շրջանը կապված է 1993 թվականին այն գլխավորած գեներալ Մ.Կախրիմանովի անվան հետ, ով կոչ է արել ուժային կերպով փոխել սահմանները: 1995թ. կազմակերպության ղեկավարները ականավոր մարզիկ Ռ.Աշուրալիևի գլխավորությամբ եկան ավելի չափավոր ծրագրի: Նրանք պահանջում էին ռուս-ադրբեջանական սահմանն ազատ հատելու իրավունք և լեզգիներով խիտ բնակեցված տարածքում «Սամուր» ազատ տնտեսական գոտու ստեղծում: «Սադվալ» լեզգիական շարժման ակտիվության նվազումը և նույնիսկ դրա պառակտումը 1990-ականների կեսերին, շարժման անդամները կապում են Ռ.Աշուրալիևի՝ Դաղստանի Հանրապետության Ժողովրդական ժողովի պատգամավոր ընտրվելու և Մախաչկալայի մեխանիկական ուսումնարանի տնօրեն նշանակվելու հետ: 1996 թվականին Մախաչկալայում, մշակույթի հանրապետական կենտրոնի շենքում, տեղի ունեցավ «Սադվալ»-ի 6-րդ համագումարը: Ավելի ուշ որոշ ակտիվիստներ դա համարեցին ոչ կոմպետենտ, քանի որ ներկա էր պատվիրակների ընդհանուր թվի մեկ երրորդից էլ ավելի քիչ:

Կազմակերպության ղեկավար Ռ. Աշուրալիևի երկամյա գործունեության հաշվետվությունից հետո նա կրկին ընտրվեց կազմակերպության նախագահ: Ի նշան բողոքի՝ պատվիրակների մեծ մասը լքեց դահլիճը՝ կարծելով, որ ղեկավարությունը անգործության է մատնված՝ քաղաքական գործունեությունը փոխանակելով

[24] Տե՛ս Абдурагимов Г. , Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://lezgi-yar.ru/news/genocid_lezginskogo_naroda_v_azerbajdzhane_i_dagestane/2012-02-13-641 (Մուտք՝25.03.2022)

հանրապետական խորհրդարանում տեղի հետ: Այսինքն՝ պառակտումը նշվեց պաշտոնական իշխանության և ընդդիմության կողմնակիցների գծով:

Իրավիճակը փոխվեց 1998 թվականի նոյեմբերին Սադվալի 7-րդ համագումարից հետո, երբ արմատական թևը կրկին ակտիվացավ լեզգիական ազգային շարժման մեջ: «Սադվալը» համատեղում էր աշխատանքի օրինական ձևերը անօրինականի հետ և արդեն 1990-ականների վերջին ուներ մինչև 14 հազար հոգանոց զինյալների զինված ջոկատներ, ինչը Բաքվին ստիպեց սահմանամերձ շրջաններում տեղակայել մինչև չորս ռազմական բրիգադ:

Շատ քաղաքական գործիչներ և փորձագետներ Ադրբեջանում կարծում են, որ Սադվալը Ռուսաստանի հատուկ ծառայությունների կազմակերպություն է: Նրանք գտնում են, որ Մոսկվան այս կազմակերպության միջոցով ապակայունացնում է իրավիճակը Ադրբեջանի հյուսիս-արևելքում, ինչպես նաև փորձում է իր համար ստեղծել նոր հնարավորություն խառնվելու Ադրբեջանի ներքաղաքական կյանքին:[25]

Լեզգիների ազգային շարժման զարգացման հաջորդ փուլը կապված էր ազգային քաղաքականության հայեցակարգի մշակման և 1996թ. հունիսի 17-ին «Ազգային մշակութային ինքնավարության մասին» դաշնային օրենքի ընդունման հետ: Նրա խոսքով՝ Ռուսաստանի ժողովուրդները, բացի գոյություն ունեցող վարչատարածքային ինքնավարություններից, ստացել են նաև էթնոմշակութային ինքնորոշման հնարավորություն: Ազգային-մշակութային ինքնավարությունը հնարավորություն տվեց ձեռք բերել հատուկ կարգավիճակ, ժողովուրդներին տրամադրեց ինքնության, մշակույթի և լեզվի պահպանման հնարավորություններ և մեխանիզմներ իրենց տարածքային ինքնավարություններից դուրս կամ նույնիսկ առանց դրանց՝ Ռուսաստանի Դաշնության ողջ տարածքում: 1999թ. ապրիլի 9-ին ստեղծվեց Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարությունը, որի նպատակները հռչակեցին Ռուսաստանում լեզգիների համայնքների համախմբումն ու զարգացումը՝ նրանց ինքնությունը, մայրենի լեզուն, ազգային մշակույթը և մայրենի լեզվով կրթությունը պահպանելու ճանապարհով: Այս առաջադրանքն իրականացնելու համար այն սերտորեն համագործակցում է Ռուսաստանի

[25]Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016, էջ 199

Դաշնության շահագրգիռ պետական, հասարակական, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ներառյալ Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովը, Նախագահի վարչակազմը և Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը: «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարության» մշտական գտնվելու վայրը Մոսկվան է, որի հիմնադիրներն են Տյումենի մարզային լեզգիական ազգային մշակութային ինքնավարությունը և Կրասնոյարսկի շրջանային լեզգիական ազգային մշակութային ինքնավարությունը:

2003թ. հունիսի 4-6-ը «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարության» ղեկավարները և Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի պատգամավորները՝ ազգությունների հարցերով հանձնաժողովի անդամները մեկնեցին Դաղստան՝ ուսումնասիրելու լեզգիների և լեզգիական ազգի արդիական էթնոքաղաքական խնդիրները և ծանոթանալու Հարավային Դաղստանի սոցիալ-տնտեսական իրավիճակին: Ուղևորության ընթացքում հանդիպումներ են տեղի ունեցել Դաղստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի, Հարավային Դաղստանի շրջանների վարչակազմի ղեկավարների հետ, Դերբենդի հանրության հետ: Ելնելով Դաղստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքներից՝ Պետդումայի պատգամավորները, որոնք ներկայացնում են ազգությունների հարցերով հանձնաժողովը, «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարության» ղեկավարության հետ համատեղ պատրաստել են ընդլայնված կոչ՝ Դաղստանի Հանրապետությունում լեզգիների և լեզգի ժողովուրդների սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ և ազգությունների կոմիտեի նախագահի ստորագրությամբ՝ այն ուղարկել նախագահ Պուտինին՝ համապատասխան գործողությունների համար: Բողոքն ու դրան կից նյութերն ուսումնասիրելուց հետո ՌԴ նախագահի աշխատակազմը ՌԴ և Դաղստանի Հանրապետության կառավարություններին հանձնարարել է համապատասխան միջոցներ ձեռնարկել սահմանամերձ շրջաններում իրավիճակը բարելավելու համար:

Լեզգիական հարցը նորից ռուս-ադրբեջանական քննարկումների օրակարգ մտավ, երբ երկու երկրների նախագահները՝ Դ. Մեդվեդևը և Ի. Ալիևը, 2010թ. սեպտեմբերի 3-ին ստորագրեցին երկու երկրների պետական սահմանների մասին պայմանագիրը, ըստ որի Դաղստանի Մագարամքենդի շրջանի երկու գյուղեր՝ Խրախ-Ուբա և Ուրյան-

Ուբա, անցան Ադրբեջանի Խաչմազի շրջանին՝ 450 լեզգի քաղաքացիներով։ Երկու երկրների նախագահների այս որոշումը սուր քննադատության արժանացավ ՌԴ-ում գործող «Սադվալ» և «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարություն» կազմակերպությունների կողմից։ Ռուսական կողմը Ադրբեջանում ՌԴ դեսպան Վասիլի Իստրատովի կողմից հաստատեց ու համարեց, որ այս երկու գյուղերը ադրբեջանական տարածքներ են։ 2011թ. փետրվարի 8-ին Խրախ-Ուբայի բնակիչները Մախաչկալայում ցույց անցկացրին, որտեղ արտահայտեցին իրենց դժգոհությունը ադրբեջանական ղեկավարությանը, որոնք էլ գյուղի բնակիչներից պահանջեցին ընդունել ադրբեջանական քաղաքացիություն և սպառնացին, որ նրանց բռնի կտեղահանեն առանց գույքի և հողի փոխհատուցման։[26]

2013թ. իրավիճակը Դաղստանում կտրուկ սրվում է, երբ տեղական իշխանությունները փորձում են քաղաքի փողոցներից մեկը անվանակոչել Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևի անունով։ Դրան դեմ հանդես եկան տեղի լեզգիները, «Սադվալը», «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարությունը»։ Ցույցը կազմակերպված էր տեղի լեզգի ակտիվիստների կողմից, որը դաժանորեն ցրվում է տեղական իշխանությունների և Բաքվի էմիսարների կողմից։ Այս բռնությունները «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարության» նկատմամբ, որը պաշտպանում էր Ադրբեջանում լեզգի փոքրամասնության իրավունքներն ու հետաքրքրությունները, երկար սպասեցնել չտվեցին։ 2013թ. օգոստոսին ՌԴ նախագահի՝ Բաքու մեկնելուց մի քանի օր առաջ Ադրբեջանում ձերբակալվում են «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարության» ղեկավարների բարեկամներից ոմանք։ Բոլոր նրանց ներկայացվեց մեղադրանք թմրանյութ պահելու համար։ 2013թ. սեպտեմբերի 4-ին լրագրող Մաքսիմ Շեվչենկոն ՌԴ նախագահին կից Մարդու իրավունքների պաշտպանության խորհրդում այս ձերբակալությունները համարեց մարտահրավեր Ռուսաստանի և անձամբ նախագահի դեմ։ Վ. Պուտինը տեղում տալիս է հանձնարարություն ԱԳՆ-ին, որպեսզի ծանոթանան իրավիճակին։ Բայց ադրբեջանական իշխանությունը այս

[26] Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016, էջ 199-201

ձերբակալվածներին պահեց մինչև 2013թ. դեկտեմբեր: Ձերբակալվածներին ազատելուց հետո «Լեզգիական դաշնային ազգային մշակութային ինքնավարության» ադրբեջանական գործունեությունը անկում ապրեց:[27]

Այսպիսով, հայերի, լեզգիների և մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ խտրական քաղաքականությունը Ադրբեջանում միշտ էլ եղել է բացահայտ ու բիրտ, որի մասին վկայում է 1959թ. հուլիսի 1-ին ԽՄԿԿ ԿԿ նախագահության հատուկ քննարկման նյութը, որտեղ գեներալ-գնդապետ Ի. Վ. Շիկինը ներկայացնում է ադրբեջանական իշխանությունների ծայրահեղ ազգայնամոլական գործողությունները և կատարում մեջբերում Ադրբեջանի ԳԽ նախագահ Մ. Իբրահիմովից. «Այժմ 20-ական թվականները չեն, այժմ մենք ունենք կադրեր բոլոր ոչ ադրբեջանցիներին փոխարինելու համար»:

Ադրբեջանը, 20-րդ դարի 60-ական թվականներից մինչև հիմա ազգային ինքնագիտակցություն ձևավորելու մոլուցքով տարված, սերմանել է ատելության քաղաքականություն: Ազգային քաղաքականությունը չի փոխվել, և Ադրբեջանը շարունակում է քողարկված ու զգուշավոր մեթոդների կիրառումը դարձնել առաջնահերթություն:

Ադրբեջանի իշխող վերնախավը առաջնորդվում է «Ադրբեջանը միայն ադրբեջանցիների համար» գաղափարով, իսկ նրանք, ովքեր ընդդիմանում են, նրանց նկատմամբ վարում են ձուլման քաղաքականություն: Հերթական անգամ եկվոր ադրբեջանցին փորձում է ապացուցել իր «իրավասությունը» տեղաբնիկ ժողովուրդների կենսատարածքի վրա:[28]

---

[27]Տե՛ս Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016, էջ 199-202

[28] Տե՛ս «Ընդդեմ Ադրբեջանի հայատյաց քաղաքականության», Հրատարակություն ՀՅ Դաշնակցություն, Երևան 2007, էջ 12-14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգում ենք հետևյալ հիմնական եզրահանգումների՝

- Կովկասը հանդիսանում է աշխարհի ամենաբարդ աշխարհաքաղաքական տարածաշրջաններից մեկը, ուր բախվում և խաչվում են թյուրքալեզու և հնդեվրոպական, քոչվոր և տեղաբնիկ ժողովուրդների հակադիր քաղաքակրթությունները, որոնք ձևավորում են մշակութային խայտաբղետ սիմբիոզ: Հարցը առավել ցավոտ և զգայուն է դառնում, երբ կրոնական գաղափարները հակադրվում են միմյանց:
- Հարավային Կովկասում տեղաբնիկներ են համարվում հայերը, վրացիները, լեզգիները, թալիշները, իսկ եկվորներ՝ ադրբեջանցիները: Նրանք տեր են դարձել տեղաբնիկների տարածքներին, նրանց ստեղծած արժեհամակարգին և յուրացրել այս ժողովուրդների թե՛ լեզվական, թե՛ կենցաղավարման, թե՛ սովորույթային առանձնահատկությունները:
- Լեզգիների տարածքային ամբողջականության խախտումը ազդել է նրա երկու հատվածների էթնիկ զարգացման վրա: Մի մասը հայտնվել է Դաղստանի, իսկ մյուս մասը՝ Ադրբեջանի տիրապետության տակ: Դաղստանում լեզգիները կարողացել են որոշակի ձևով պահպանել իրենց ազգային դիմագիծը, իսկ Ադրբեջանում իշխանությունների կողմից իրականացված քաղաքականության արդյունքում լեզգիների մեծ մասը բռնի կերպով ձուլվել և ուծացվել է:
- 20-րդ դարի սկզբին ազգային դիմագիծը պահպանելու համար լեզգի ժողովրդի պայքարը Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի դեմ արտահայտվել է տարբեր կազմակերպությունների հանդես գալով:
- Ադրբեջանի կողմից լեզգիների ձուլողական քաղաքականությունը հանգեցնում է ազգային, մշակութային ինքնության կորստին, օրինակ՝ Ադրբեջանում նրանք դիտվում են ոչ թե որպես ազգային փոքրամասնություններ, այլ ադրբեջանցիներ:
- Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների և ուծացման քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների նկատմամբ շարունակվում է նաև այսօր: Տեղաբնիկները մարդահամարների ցուցակներում չեն ներկայացվում որպես ուծացած կամ «անհայտ» պատճառներով վերացած ժողովուրդ, իսկ մեծաթիվ

լեզգիների թվաքանակը ներկայացվում է խիստ կրճատված, և տարբեր ժամանակաշրջանների մի շարք վերլուծաբանների մոտ հանդիպում ենք կամայական ցուցանիշների:

- Չնայած Ադրբեջանի ներկայիս իշխանությունները ըստ Սահմանադրության իրենց հռչակել են Դեմոկրատական Հանրապետություն, նույն Սահմանադրությամբ ամրագրել ազգերի, ազգային փոքրամասնությունների իրավական նորմերը, Եվրախորհրդում մարդու իրավունքների կոնվենցիայի պարտադիր կատարողներից են, բայց վերոնշյալ օրինական ոչ մի գործառույթ չեն իրականացնում և շարունակում են ադրբեջանականացման գործընթացը ազգային փոքրամասնությունների նկատմամբ:
- Ադրբեջանի ձուլողական քաղաքականության մարտահրավերին լեզգիները պետք է կարողանան դիմակայել իրենց էթնոմշակութային առանձնահատկությունները՝ ազգային դպրոց, մամուլ, գրականություն, պահպանելով և դրանք ավելի խորացնելով: Եթե հետագայում Ադրբեջանում դադարեցվի ազգատյաց քաղաքականությունը, և նոր քաղաքական հասարակարգ ձևավորվի, գուցե լեզգիները կարողանան հասնել ազգային ինքնագիտակցության մի մակարդակի, որի գործնական արտահայտումը կլինի ազատ ինքնորոշման իրավունքը, լեզգիական ինքնավարության կամ պետության ձևավորումը:
- ՄԱԿ-ի և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնաժողովները պարտավոր են նորովի մոտենալու ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներին, ընդհուպ մինչև այն կրող իշխանությունների վրա իրավական ճնշում գործադրելու միջոցով: Յուրաքանչյուր պետության արտաքին քաղաքականության ռազմավարությունը պետք է լինի հատուկ մասնագիտական հանձնախմբերի միջոցով համաշխարհային հանրությանը չեզոք և անաչառ ձևով ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները ներկայացնելը:
- Եթե անգամ լեզգիները մոտ ապագայում չկարողանան վերականգնել անկախ պետականությունը, պիտի պայքարեն իրենց ազատ ինքնորոշման, ինքնավարացման իրավունքի համար: Նրանք բոլոր հիմքերը ունեն, քանի որ կենսատարածքի բնիկ ժողովուրդներն են:

Օգտագործված գրականության ցանկ

Գիտական հոդվածներ

1. Լ. Մկրտումյան, Լեզգիների և թալիշների կացությունը արդի Ադրբեջանում, Երևան, 2012, https://arar.sci.am/dlibra/publication/294483/edition/270319/content

2. Агаджанян М., Политико-правовые аспекты положения национальных меньшинств Азербайджанской Республики, 2006, file:///C:/Users/Home/Downloads/politiko-pravovye-aspekty-polozheniya-natsionalnyh-menshinstv-azerbaydzhanskoy-respubliki.pdf

3. Амбарян Г., Современная политика властей Азербайджана в отношении лезгин, Արևելագիտության հարցեր XI , Երևան, 2016,

4. Литвинова Т. Н., Особенности институциализации этнонационального движения ха Северном Кавказе России (на примере лезгин), 2015 file:///C:/Users/Home/Downloads/osobennosti-institutsionalizatsii-etnonatsionalnogo-dvizheniya-na-severnom-kavkaze-rossii-na-primere-lezgin.pdf

5. F. Khansari, M. Ali Basiri, E. Yazdani, Ethnic Bargaining and separatism in the South Caucasus, 2019

Էլեկտրոնային կայքեր

Абдурагимов Г., Геноцид лезгинского народа в Азербайджане и Дагестане, http://www.peoples-rights.gumilev-center.ru/genocid-lezginskogo-naroda-v-azerbajdzhane-i-dagestane/